ARMENIA Journal en langue Arménienne fondé à MARSEILLE en 1885

ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամբողջ 31րդ տարեշրջանի (1915 օգոստոս–1916 յուլիս) բաժնորդագինն է 20 ֆրանք։ Թիւրքիոյ և Պարսկաստանի համար 10 ֆրանք, ԿԱՆԽԻԿ։ Ամսական բաժնորդագինն է 2 ֆրանք. Թիւրքիոյ և Պարսկաստանի համար 1 ֆրանք.։ Նամակ կամ դրամ դրկել այս հասցէով.

M. PORTOUKALIAN
Directeur du journal *Armenia*
MARSEILLE (France)

ԼԱ. ՏԱՐԻ
Թիւ 25

1916 ՅՈՒՆՎԱՐ 18 Գշ.
(Հ.Տ. 1916 Յունվար 5)

ԳԱՅՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը եթէ հարկ համարի, համառօտելով և կամ ամբողջ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնելու չհրատարակուած ձեռագիրները։

Ծանուցումներ կընդունուին Հայերէն և Ֆրանսերէն լեզուով։

Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանթիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանթիմ։

Les annonces en français et en arménien sont reçues au bureau de la Rédaction : Place Alexandre-Labadié ,17

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ «ԱՐՄԵՆԻԱ»Ի ԼԱ. ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ

(1915 ՕԳՈՍՏՈՍ — 1916 ՅՈՒԼԻՍ)

Ամբողջ 31րդ տարեշրջանի (1915 օգոստոս–1916 յուլիս) բաժնորդագինն է 20 ֆրանք (4 տոլար ամերիկեան կամ 7 րուբլի և 50 կոպ. ռուսական) ամէն տեղի համար, ի բաց առեալ Թիւրքիան և Պարսկաստանը, ուր կը դրկուի կէս բաժնորդագնով, այսինքն ամբողջ տարեշրջանին համար 10 ֆրանք բաժնորդագնով։ Կարելի է բաժնորդագրուիլ նաև քանի՛ ամիս համար որ ուզուի, ամսական 2 ֆրանք (40 սէնդ = 75 կոպ.) հաշուելով, կամ 1 ֆրանք Թիւրքիոյ և Պարսկաստանի համար։

Յայտնի է արդէն թէ անոնք որ «Արմէնիայի Օժանդակ» արձանագրուած են մեր հրատարակած Օժանդակութեան Կանոնագրին համեմատ, իրաւունք կ'ունենան Արմէնիա ստանալու, քանի՛ անձի համար որ ուզեն. իրենց ստացած լրագրի ծրարին մէջ գրուելով և կէս բաժնորդագնով, այսինքն ամբողջ շրջանին համար 10 ֆրանքով կամ ամսական 1 ֆրով։ Կարելի է նաև Օժանդակի նշանակած բաժնորդի հասցէին ուղղակի դրկել թերթը, 12½ ֆր. (2½ տոլ.) բաժնորդագնով։

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

	ֆր. սնդմ.
Ա. Հայ դիւցազնութիւնը Բ. տպագր.	,40
Բ. — Է. (Սպառած)	
Ը. Թիւրքիոյ Հայերն եւ իրենց դրացիները (Գրեց Մ. Աւետիսեան)	,50
Թ. «Արմէնիա»յի յուշարար (Ա. տարի)	1,40
Ժ. Վրէժ	,20
ԺԱ. Թամար Բագարիս	,20
ԺԲ. Նմուշներ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդներէն	,15
Ժ. Մի պուլկար հայրենասէր (Պուլկարիոյ Յեղափոխութեան ծագմանպատմութիւնը)	1,40
ԺԴ. Մի՛ գաղթէք	,20

Մարսէյլէն դուրս ղրկելու փոստի ծախսը կը վճարուի հրատարակողէն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգ. — Ոչ ճանաչեմ զձեզ. — Մեր ցաւերէն. — Ռուսեւթիւրք պատերազմը եւ Հայերը. — Օտարների օգնութիւնը հալածուած Հայաստանցիներին. — Հայերը Ռուսիայի մէջ. — Ռուս զօրաբանակը Թիւրքահայաստանի մէջ. Տեղական. — Թիւրքական լուրեր. — Վիլհէլմ Բ.ի հիւանդութիւնը. — Պատերազմական լուրեր. — Նամականի. — Բանասիրական (Ծնունդի գիշերը). — Ծանուցումներ։

ԱԶԳ

Վաղը, չորեքշաբթի (6/19 յունվար), Ծնունդի տօնը լինելուն պատճառով Արմէնիան հրատարակուեցաւ այսօր, երեքշաբթի։

«ՈՉ ՃԱՆԱՉԵՄ ԶՁԵԶ»

Անհուն ցաւով և ակնածանքի վարանոտ զգացումով մը միայն կարելի է դիտել Եւրոպայի, մանաւանդ Ֆրանսայի հայ երիտասարդութեան մէկ ծաղիկ հատուածը, ուսանողութիւնը։ Ուսանողութիւնը կըսեմ և ոչ թէ ուսանողներ որովհետև եթէ մէկ փոքրիկ մասնիկն իսկ իր անունին արժանավայել պատասխանատուութիւնը զգար, կրնար այսօր աւելի երես ճերմկցնող ընթացքի մը հետևեցնել միւսներն ալ։ Բայց ի՞նչ կը տեսնենք այսօր. մեռելութի՛ւն, մեռելութիւն ամենուրեք։ Ոչ մէկ խլրտում, ոչ մէկ արձագանգ։ Մէկ ու կէս տարի է որ մեր հարազատներու արիւնը վտակ կազմած է հայրենի հողին վրայ և այդքան ժամանակ է որ խլութիւնն ու կուրութիւնը կը թագաւորեն մեր «ծաղիկ»ներու սրտին մէջ. կարծես մեղկութեան սահանքը կը քշէ կը տանի մեր ուսանողութիւնը դէպի ապականում, դէպի կորուստ։

Բարիզը, որ հայ ուսանողութեան ստանցքն է և որ քանի մը տասնեակներ կը հաշուէ իր մէջ, ամենէն խղճալի պատկերը կը դնէ մեր աչքի առջև։ Անկէ ստացուած առանձինն նամակներ, գրեթէ միշտ, հայ ուսանողութեան ճախճախուտը կը ցուցադրեն։ Այս ո՜րքան ամօթալի է։ Անդին՝ հայրենիք մը կը յօշոտուի, բզիկ-բզիկ կըլլայ մարմինը գազաններու ակռաներուն տակ, ազգին՝ սերունդ մը խաղաղ կեանքի մը մէջ դէպի մահ կը դիմէ բարոյապէս, դէպի լպիրշ մահը...։

Անոնք որ չգնացին մեռնիլ կամ ֆրանսական ռազմաճակատին և կամ Հայաստանի մէջ, ինչ կրցան ընել գէթ մենք ոչինչ կրցանք իմանալ։ Ո՞ւր է հայ ուսանողական Միութիւնը որ կորիզը պէտք էր ըլլար շարժումի մը որ պատիւ բերէր ուսանող անունին, որ զգացնէր Ֆրանսային թէ հայ ցեղին մէջ դեռ չէ մեռած կենսունակութիւնը, որ կըրնայ շարժիլ, կրնայ գործել։

Եթէ ուսանողութիւնը անկարող կըզգար ինքզինք մեծ գործերու, կրնար առնուազն նուիրուիլ համեստ պրոպագանդի գործին, գէթ կրնար զգացնել իր գոյութիւնը և հրահրել հայ երիտասարդութեան եռանդը դէպի գործ, դէպի հայրենիքի սէր։

Մարսէյլ, պէտք է խոստովանիլ, իր ոչ-ուսանող երիտասարդութեամբ աւելի նախանձելի է, քանի որ կըրցաւ ունենալ Միութիւն մը որ կը շարժի, կը գործէ, թէև չպակսին անտարբերներ ալ որոնք ոչ մէկ գործ չտեսնելէ զատ՝ բարձրերէն կը դիտեն և քննադատութեանց ասպիններէն վար չիջնելով հանդերձ՝ մեծ գործ մ'ըրած ըլլալ կը կարծեն։ Այսօր ամէն ոք պէտք է իյնայ հանրային գործի հոսանքին մէջ. եթէ չկայ հոսանք, պէտք է գոյացնել. լռութիւնը մահ է և անարգ մահ։ Պէտք է շարժիլ առանց գիտնալու խափանելու սակայն, առանց մեծամիտ փառասիրութիւններու, առանց պատասխանատուութեան և համերաշխ ու մաքուր գործունէութեամբ։

Բայց ո՞ւր է ուսանողութիւնը, որ ապագայ յոյսը պիտի ըլլար հայրենիքին։ Լռութի՜ւն ամենուրեք։ Հայրենիքը կը մեռնի... թո՛ղ մեռնի. որո՞ւ հոգ. բաւ է որ իրենք ապրին. ինչ մահահոտ և զարշահոտ կեանք։ Ո՞ւր 1850ի սերունդը, որ Ռուսինեաններ, Օտեաններ, Սանփան Ոսկաններ կը պատրաստէր Բարիզի մէջ և ո՛ւր ներկայինը։ Անոնք կեանք ստեղծեցին, ասոնք եղածն ալ կը մեռցնեն։

Ի՜նչ սորվելի ուսանողութիւն որ մասնաւորական պիտակն ալ ունի իր ճակտին. ի՞նչ պիտի ըսեն ձեզի այժմ Միսաքեանթոնները, Վարուժաններ, Ռ. Սևակներ, Զօհրապներն ու Զարդարեանները իրենց գերեզմաններէն, եթէ ունին։ Ի՞նչ պիտի ըսէ ձեզ վաղը արնաքամ Հայաստանն ալ որուն անարժան զաւակները կըլլաք դուք։ Ելէ՛ք դարձէ՛ք, քանի ուշ չէ. թօթափեցէ՛ք մեղկութեան փոշիները ձեր ուսերէն, որպէսզի լայն բացէք հայրենիքի վէրքին առջև, հայրենիքի լեռնացած վէրքին դիմաց։ Ի՞նչ կեանք է այս և ո՞ւր կապրինք։ Միթէ՞ չէք տեսներ Ֆրանսան, անոր թարմ ուսանողները, որոնք բոլորն ալ գնացին զոհուիլ և կերթան տակաւին այնքան ուրախ։ Իսկ դուք փոքրագոյնն անգամ չէք ուզեր մատուցանել մեծագոյնը պահանջող Հայաստանին։

Ու վաղը երբ այսօրի արիւններէն ու մոխիրներէն ձերբազատուած Հայրենիքը պիտի շնչէ և դուք ձեր ախտաւորեան քայլերով հոն դիմէք, Եւրոպայէն վարուած ձեր անշահ կեանքը քաշքշելու համար, դուները պիտի գոցուին ձեր առջև և հայրենիքի որբութիւնը ձեր դիմաց կանգնած պիտի պոռայ ապահովաբար «հեռու՛, հեռու, ո՛չ ճանաչեմ զձեզ»։

Թ. ԵՂԻՇԷ

ՄԵՐ ՑԱՒԵՐԷՆ

Համաշխարհային այս փոթորկալից օրերն երբ գրեթէ բոլոր ազգեր իրենց գոյութեան կռիւն է որ կը մղեն, բնականաբար հայ ժողովուրդը չպիտի կարենար բացառութիւն, մանաւանդ աւելի քան ուրիշներ՝ իր ճակատագրական տառապելի պայմաններով և հանգամանքներով։ Ինչպէս միշտ, այս համաշխարհային պատերազմին մէջ ալ կը վերցնէ տառապանքի մեծ բաժին մը։

Թուրքիոյ հայաջինջ քաղաքականութիւնը աւելի քան սարսափելի վայրագութիւններով սկսած է իր

նպատակի իրագործումը փութացընել, տարիներէ ի վեր ծրագրուած « Հայաստանը առանց Հայի » տեսնալու գաղանային ցանկութիւնով։ Անոր փոխարէն, հայ շրթները կը թոթովէն անընդհատ. « Հայը ապրած է և պիտի ապրի »։ Իսկ թէ ո՞ր աստիճանի պիտի կարենանք արդարացնել այդ խօսքը, այդ պիտի նկատուի խնդրական առ այժմ եթէ երբէք ամէն հայ անհատ չստանձնէ իր պարտականութեանց բաժինը, որոնցմով պիտի կարենայ ապրիլ հայ ազգը ներկայ իր դժնդակ պայմաններով մէկ տեղ։

Կարելի չէ երբէք անտեսել որ Ռուսահայը, ինչպէս անցեալին մէջ, նմանապէս և ներկայիս չթերացաւ իր պարտականութեանց մէջ, նուիրաբերելով իր կեանքը, միտքը և ինչքը Թրքահայ ազատագրման սրբազան գաղափարին։ Ռուսահայը շատ աւելի ընդունակութիւն ցոյց տուաւ ըմբռնելու վայրկեանի լրջութիւնը և պահանջը, և չվարանեցաւ օգնութեան ձեռք կարկառել ընչազուրկ և յուսատանջ Թրքահայ ազգակիցներուն։ Ապացոյցները շատ ու շատ են պատերազմի սկիզբէն մինչև այսօր։

Մենք տեսանք թէ ինչպէս համոզումով ու եռանդով մը փարեցաւ կովկասահայը կամաւորական շարժման, որուն սրտառուչ տպաւորութիւնները դեռ թարմ են մեր ամէնուս սրտերուն ամենախոր անկիւններուն մէջ իսկ։

Մենք տեսանք թէ ինչպէս Ռուսահայ ծերունին իր միակ նեցուկը կազմող որդւոյն ձեռքէն բռնած կը տանէր կամաւորական շարքերու մէջ մտնել, յայտարարելով միանգամայն թէ ուրիշ ոչինչ ունէր տալէ աւելի որ կրնար մատաղ բերել Հայաստանի ազատագրման սրբազան սեղանին։

Մենք տեսանք թէ ինչպէս Ռուսահայ մայրը երբ կիմանար կամաւորական գունդերու մէջ գտնըւած իր որդւոյն մահը, ո՛րպիսի յուզումով և անէծքով կը ծեծէր իր արգանդը որ չէր կրնար ուրիշներ ծնիլ այլևս, որոնք պիտի ղրկէր ապահովաբար առաջիններուն կիսատ թողած գործը վերջացնելու։

Մենք տեսանք թէ ինչպէս Ռուսահայը իր քսակի բերանը լայն բացած էր տալու համար իր ունեցածին մեծագոյն մասը. և դեռ մինչև այսօր անդադար և սիրով կը տանի իրենց կարողութեան համեմատ սահմանուած ազգային տուրքը։ Եւ դեռ ինչե՜ր այս կարգի որոնց շարքը շատ երկար կը լինէր։

Իսկ մենք Թրքահայերս բաղդատաբար աւելի նուազ չափով մասնակցեցանք ներկայի պահանջներու կատարման, հակառակ որ մենք աւելի քան Ռուսահայը պարտաւոր էինք չթերանալ մեր պարտականութեանց մէջ, արտաբերելով մեր ֆիզիքական և նիւթական բոլոր կարողութիւնները. մենք՝ որ շատ աւելի պէտք էր մղուէինք անձնազոհութեան և զոհողութեան բովանդակ գիտակցութեամբ, որովհետև մենք ենք որ այնքան երկար տարիներէ ի վեր կը հիծինք Թրքական լուծին և հարուածին տակ։

Հակառակ այս բոլոր եղելութեանց՝ Թրքահայերս, կարծես հայ անուան հետ յարակից և անբաժան ունեցանք, սկիզբէն մինչև այս օր, արդէն պատմական դարձած անմիաբանութիւնը։ Ջնջեցինք մեր ամենագեղեցիկ զգացումները և տարուեցանք ներքին տարաժամ խնդիրներով և խլրտումներով։ Ամերիկայէն սկսեալ մինչև Եգիպտոս, Ֆրանսա և վերջապէս մինչև Մարսէյլ Մեր մէջ չպակսեցան մարդիկ որոնք առաջնորդուեցան անձնական նեղմիտ և գծուծ հաշիւներով, չկարենալով զսպել իրենց մէկ անսանձ « Ես »ը, հանրութեան և ազգային շահերուն։ Չըպակսեցան մարդիկ որոնք եսամոլ և անսահման զգացումներէ մղուած, աշխատեցան ջլատել կազմակերպեալ երիտասարդ ոյժեր, որոնք գեղեցիկ զգացումներով տոգորուած, պարտքի գիտակցութեամբ ոգևորուած, յանկութիւն ունեցան միահամուռ գործակցութիւն մը ցոյց տալու. և վերջապէս դեռ աւելի այս կարգի խնդիրներ որոնք դժբաղդաբար պակաս եղած չեն Թրքահայ իրականութեան մէջ։

Վերջապէս, այսպիսի անցեալ մը ունեցած ենք Թրքահայերս, միևնոյնը շարունակելով պատերազմի սկզբնաւորութենէն մինչև այսօր, գրեթէ 1914 և 1915ը։ Չգիտենք թէ ինչպէս պիտի անցնի 1916ը. արդեօ՞ք պիտի ըլլայ միօրինակ կրկնութիւնը անցեալին որ պիտի դառնայ բնականաբար կործանարար, թէ պիտի գիտնանք խրատուիլ անցեալէն և աշխատիլ այս նոր տարին 1916ը աւելի բարեբաստիկ և արգասաւոր տարի մը դարձնելու, որուն այնքան պէտք ունի մեր բազմաչարչար և յուսատանջ Հայրենիքը։ Ահա այն ատեն է որ հաստատապէս պէտք է համոզուինք թէ պիտի յաջողինք մեր առաջադրած խնդիրներու շուրջ, և մի օր բաղդը պիտի ունենանք ողջունելու նորածագ գեղեցիկ արշալոյս մը Հայաստանի սրբազան հողին վրայ։

Մարսէյլ, 12 յունվար 1916

Ա. ԹՈՐՈՍԵԱՆ

ՌՈՒՍԵՒԹՈՒՐՔ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Վան, 22 Նոյ. (5 դեկտ.)

Այսօր վերադարձաւ այստեղ, վերջին օրերումս տեղի ունեցած ահեղ կռիւներից յետոյ, Իշխանի (1) վեցերորդ հայկական գունդը,

(1) Իշխան Երկայնաբազուկ Արղութեան որի հրամանին տակ կը գտնուի Հայ կամաւորների 6րդ գունդը։

ԽՄԲ. ԱՐՄ.

Տեղացիներից բաւական թիւով մարդիկ գնացել էին ընդառաջ ողջունելու բանակին, նրա տարած մի շարք յաղթութիւնների համար, որը մեծ տպաւորութիւն է թողել տեղիս հասարակութեան և թէ ռուս զինւորական շրջանների վրայ։

Խօսեց զգացուած Աղթամարի տարագիր վանահայրը։ Կամաւորների մօտ կային տաճկական դրօշակներ կարմիր կիսալուսինով, որ խլել էին կռիւների ժամանակ։ Բանակը եկել է մի քանի օրով հանգստանալու և նորից կերթայ կռիւներին մասնակցելու։

Գեներալ Չ.Ն առաջարկել է հրամանատարին բոլոր արժանաւորներին շքանշաններ տալ։

Վանեցեան

Բաթում, 4 (17) դեկտեմբերի

Նոյեմբերի 17ին, Սամսոնից, Մուրադ Խրիմեանը (Սեբաստացի Մուրադը) իր 12 հայ և 9 յոյն ընկերներով, նաւակով հասնում է Բաթում. նաւակում կային և 3 թիւրք նաւավարներ։

Նաւակը Սամսոնի մօտ ափից էր դատարկուել։ Մուրադը և ընկերները յարձակւում են նաւակի վրայ, կապոտում են թիւրք նաւավարներին, մի քիչ պաշար և հինգ պարկ էլ ալիւր են առնում նաւակի մէջ ու հրամայում են թիւրք նաւաստիներին թիավարել դէպի Բաթումի կողմը։ Թիւրքերը ճանապարհին աշխատելիս են եղել միշտ դէպի ափը տանել նաւակը, պատճառաբանելով, որ ալեկոծութիւն է և վտանգաւոր ծովի խորքից գնալը։ Նաւավարների այդ ուղղութիւնը իսկապէս վտանգի մէջ է դրում նաւակը, և Ռիզէի մօտ թշնամին նկատում է ու երկու [illegible]կոյկով յարձակւում գործում. Մուրադի խումբը լաւ զինուած լինելով, սկսում է դիմադրել և ուժեղ հրացանաձգութիւն է լինում երկուստեք.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾՆՈՒՆԴԻ ԳԻՇԵՐԸ

(Յուշատետրէս)

1902ի Խթումի երեկոյն էր։ Ես հազիւ 9 տարու էի։ Պառկելէս առաջ շատ խնդրեցի հայրիկէս, որ առաւօտ վաղ զիս ալ արթնցնէ, միասին եկեղեցի երթալու համար։ Մինչև այս տարիքս հասած, դեռ Ծնունդի պատարագ մը տեսած չէի։ Հայրըս խոստացաւ, իսկ ես ուրախ ուրախ անկողինս մտայ։ Որչափ քնացայ չեմ յիշեր, բայց դեռ մութ էր երբ հայրս զիս արթնցուց։ Անմիջապէս վեր ցատկեցի անկողինէս և սկսայ աճապարանօք նոր հագուստներս հագնիլ։ Ի՛նչ ուրախութիւն ինծի համար. աշխարհի ամենաերջանիկը կը կարծէի ինքզինքս։ Դուրս ելանք։ Ամէն կողմ ճերմակ էր։ Կը ձիւնէր. բայց բնութիւնը խաղաղ և լուռ էր։

Եւ ահա Ծնունդի զանգակները սկսան ղօղանջել բարձր զանգակատուններուն կատարներէն։ Իսկ հեռուն ժամկոչի կոչնակը սկսաւ հնչել ուժգին և անոր ձայնի ելևէջներ կերթային խառնուելու զանգակներու ղօղանջներուն։ Այս ձայներուն ներդաշնակ երաժշտութիւնը կը բարձրանար դէպի վեր, շատ վեր, դէպի յաւիտենական Քաղաքը։ Ո՜հ, ո՛վ չէ՛ լսած Ծնունդի զանգակներուն ներդաշնակ տինկ տինկ տանկները։

Ձիւնը կը տեղար անընդհատ։ Ես հայրիկիս ձեռքէն բռնած կը յառաջանայի։ Ոտքերս ձիւներուն մէջ կը թաղուէին։ Սաստիկ ցուրտ ալ էր, բայց ես ուրախ էի և ոչինչ կըզգայի։ Քալած ատեն երևակայութեանս մէջ կը տեսնէի եկեղեցիի լուսաւոր Տաճարը, « Պզտիկ Յիսուս »ը Սբ. Կոյսին գիրկը, հրեշտակներ, մոգեր և հովիւներ իրենց հօտերով։ Կամաց կամաց եկեղեցիին կը մօտենայինք և զանգակներու ղօղանջը ալ աւելի լաւ կը հնչէր ականջներուս։

Յանկարծ մթութեան մէջ սև ստուերներ նշմարեցի որ կը շարժէին։ Ահաբեկած հայրիկիս փաթթուեցայ և պոռացի. « Հայրի՛կ, հայրի՛կ, սատանաներ... » Սև ստուերներն ա՛լ աւելի թանձրացան և դէպի մեզ կը յառաջանային։ Հայրս կանգ առաւ։ Յետոյ հրացաններու ձայներ սկսան գոռալ մթութեան մէջ։ Վախէս ձիւնի մէջ ինկայ։ Հայրս ինծ վեր վերցուց, գրկեց և պատի մը տակ կեցաւ։ Արդեօ՞ք ի՛նչ կանցնի կը դառնայ, մրմնջեց հայրս։ Ալ չէի լսեր զանգակներու ղօղանջները և ոչ ալ կոչնակի հնչիւնները։ Վախէս կը դողայի. Երևակայութենէս խոյս տուին լուսաւոր Տաճարը, « Պզտիկ Յիսուս »ը և միւսները։ Այժմ իրականութեան մէջ կը տեսնայի սև ստուերներ որ կը վազէին և կը լսէի հրացաններու գոռ ու գոչը։

Պատին տակ որչափ կեցանք, չեմ յիշեր, բայց հրացաններու ձայներ դադրեցան յանկարծակի։ Արշալոյս էր։ Խոր լռութիւն մը սկսաւ տիրել մեր շուրջ։ Արշալոյսի աղօտ լոյսով տեսանք որ այն սև ստուերներ թիւրք զինուորներ էին։ Մենք սկսանք մեր ճամբան շարունակել դէպի եկեղեցին։ Հազիւ թէ փողոցի մը անկիւնը կը դառնայինք, ահա առջևնիս ելաւ հայ գիւղացի մը, ճերմակ շապիկով մարդ մը շալկած։ Գիւղացին զինուորներով շրջապատուած էր։ Մէկ կողմ քաշուեցանք ճամբայ տալու համար. Ո՞վ էր, հարցուցի հօրս։ Նա ալ ինծի նման ոչինչ կը հասկնար անցած դարձածներէն և շուարած կը նայէր։ Ձիւնին վրայ արեան հետքեր նշմարեցինք։ Զարնուած է, մրմնջեց հայրս տխրագին։

Ես զարհուրած էի։

Դրացիի մը հանդիպեցանք որ կամացուկ մը մեզի մօտեցաւ և հեւ ի հեւ ըսաւ. « ՎԱՐԴԳԷՍՆ էր... Այս գիշեր Դ...ի տուն կը գտնուէր։ Սէմերջեան Խաչիկը զինք մատնած էր։ Խե՜ղճ Վարդգէս,... զարնուած է... բայց դեռ կապրի... »

Վարդգէսը ամբողջապէս ճանչնալ իմ մանկական գիտակցութեանս սահմանին մէջ չէր անշուշտ բայց պաշտումի նշոյլ մը կար մտքիս մէջ անոր և իր նմաններուն համար։ Այսչափը միայն գիտէի թէ Հայրենիքը վերապրեցնելու գործիչներ էին։ Ծնունդի համար ունեցած իմ անմեղունակ ամբողջ ոգևորութիւնս և ուրախութիւնս հալուած էր մեծ գոյժին առթած տխրութեանը մէջ։

Ամբողջ գիշերուան անցած դարձածները իմացուած էին այլևս։

Ազնիւ և տարաբաղդ հայ գործիչը 1902ին ազատուեցաւ մահուան և Համիտի ճիրաններէն, իսկ այժմ Ժէօն-Թիւրքերու ճիրանները զինք անշնչացուցին...

Փա՜ռք իր անմահ յիշատակին։

Սալոնիկ, 5 յունվար 1916

ՎԱՆՈՒՆԻ

մերոնց կռիւը՝ այնչան սաստիկ է լինում, որ չուտով Թուրք չոգեմակոյկները փախչում են, տալով բազմաթիւ սպանուածներ, իսկ Մուրադի խմբից սպանուած է իր չատ մօտ և սիրելի ընկերը՝ Պօղոս (Եղիչ) փափազեանը և թեթև կերպով վիրաւորւում է մի յոյն։

Ութն օր ծովի վրայ, պայքարելով թչնամու և տարերքի դէմ, Մուրադը իր խմբով հասնում է Բաթում։

Սպանուած Պօղոս փափազեանի որդին, որ Ամերիկայից վերջերս Թիֆլիս էր եկել կամաւոր գնալու համար, լսելով Մուրադի Բաթում գալը և ենթադրելով, որ իր հօր մասին կարող է ոմե տեղեկութիւն ըստանալ, գալիս է Բաթում... և յանկարծ իր հօր դիակին է դիմաւորում։

Պօղոսի յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ նոյեմբ. 19ին։ Մուրադի և ընկերների կողմից թարմ ծաղիկներից մի պսակ կար դրուած դագաղի վրայ՝ «Հերոսական պայքարում ընկած Պ. փափազեանին» մակագրութեամբ։ Ջնայած անձրևային եղանակին, խուռն բազմութիւն էր հաւաքւել զինուորական հիւանդանոցի առաջ, որտեղից դիակը տարւեց եկեղեցի և պատարագից յետոյ նոյն բազմութիւնը ուղեկցեց մինչև գերեզմանատուն։

Մուրադը ազդուած խօսքեր ասաց գերեզմանատանը. ընկերոջ սառը դիակը գրկած՝ նա փղձկաց... Յանկարծ զգլուած կրծքերից դուրս թռաւ մի խուլ հեծեծանք. լալիս էր հերոսի դագաղը շրջապատող այն բազմութիւնը, որի մեծագոյն մասը տաճկահայեր էին... Տեսարանը չափազանց յուզիչ էր։

Ցովար

(Հորիզոն)

— Վանի նահանգապետ Տէրմէնը դեկտ. 4/17ին Ջուլֆայի վրայով հեռագրած է Կովկաս հետեւալը.

«Վանի որբանոցը ամէն օր որբեր կը բերուին. իրենց թիւը 50ը անցած է արդէն։ Բերուածներէն ոմանք մերկ են, ոմանք ալ տեղը չհասած կը մեռնին անօթութենէ։ Ցուրտերն սկսած են, բայց որբերին հագուեցնելու հագուստներ չկան, վերմակներ չկան, քաղաքին մէջ բնաւ բան մը չէ մնացած։ Հիւանդանոց չկայ։ Որբերը կարօտ են մայրական խնամքի։ Օգնեցէ՛ք։»

ՕՏԱՐՆԵՐԻ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՀԱԼԱԾՈՒԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Ամերիկացի միսիոնարներ Պատ. Վիլսոն և Պատ. Հիլ՝ Ամերիկացիներէ կողմէն ղրկուած են Թուրքահայ փախստականների վիճակը ուսումնասիրելու և անոնց օգնելու համար։ Ասոնք մտադիր են օգնել նաև իրենց բնակավայրերէն բռնի հանուած և Միջագետք ղրկուած Թուրքահայերին։ Յիչեալ միսիոնարները Թիֆլիս հասեր են արդէն և դեկտ. 9/22ին ներկայացեր են Կովկասի փոխարքայ Նիկոլա մեծ դքսին։

— Անգլիաի Համայնքների ժողովի անդամ երեսփոխան Վիլսոնը որ Կովկաս ապաստանած Թուրքահայերին օգնելու համար Անգլիաի մէջ հանգանակուած 72.000 րբլ. Թիֆլիս փոխադրած էր ասկէ մի քանի ամիս առաջ, այժմ ևս նոյն նպատակի համար 46.050 րբլ. ղրկեր է Թիֆլիսի քաղաքապետ Տ. Խատիսեանին։

— Թիֆլիսի քաղաքապետ Տ. Խատիսեան մի նամակ ստացեր է Լոնտոնի լորտ քաղաքապետէն որ կիմացնէ թէ Կովկաս ապաստանած Թուրքահայերին օգնելու համար Լոնտոնի մէջ մի կոմիտէ կազմուեր է որին անդամակցած են Քէնդըրպըրիի արքեպիսկոպոսը, Լոնտոնի ռուսական դեսպան կոմս Պէքէնտորֆ, Լորտ Գրայը և այլ պատուաւոր անձեր։ Թիֆլիսի անգլիական հիւպատոսը այդ նամակը Տ. Խատիսեանի յանձնած ժամանակ միանգամայն իմացուցեր է որ հայ փախստականներին համար Լոնտոնի մէջ հաւաքուած իրեր և դրամներ ղրկուած են Արխանկէլսք ուրկէ պէտք է ստանալ և բաժնել անոնց։

ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԻԱՅԻ ՄԷՋ

Կովկասէն եկած թերթերը երկու ծանօթ անձնաւորութիւնների մահագոյժերը կը բերեն։

Տ. ԿԱՐԱՊԵՏ ԵՊ. Տ. ՄԿՐՏԻՉԵԱՆ որ Շամախիի առաջնորդութեան պաշտօնը կը վարէր, կարճատև հիւանդութենէ մը յետոյ վախճանած է Նոյ. 19/2 դեկտ.ին։ Տ. Կարապետ եպ. Հայ եկեղեցականութեան մէջ նշանաւոր դէմք մը գրաւած էր, յատկապէս պատրաստուած լինելով եկեղեցական կոչման համար։ Լաւ հմուտ էր եկեղեցական պատմութեան և իբրև բանասէր իր բարձր արժանիքն ալ ցոյց կուտան իր հրատարակութիւնները։ Իր յարմար դատած առիթների մէջ ցոյց տուած էր նաև իր ազգասիրական եռանդը։ Գերմանիա ուսանող եղած ժամանակ մի քանի գրութիւններ ալ հրատարակած է Ա.րմէնիաի մէջ։ Աստուածաբանութեան դոկտորի դիպլոմ ստանալուն առթիւ գերմաներէն լեզուով իր հրատարակած ուսումնասիրութիւնը Հայաստանի մէջ ծագում առած Պաւլիկեան աղանդաւորներին վրայ՝ արդէն իսկ այդ ժամանակէն իրեն վրայ դարձուցած էր գերմանացի աստուածաբանների ուչադրութիւնը։ Կարապետ եպ.ի մահը ահների կերպով պարապ կը թողու իր բռնած տեղը հայ եկեղեցականութեան չարքին մէջ։

Մեծ տխրութեամբ կիմանանք նաև ՍԵԴՐԱԿ ՄԱՆՏԻՆԵԱՆԻ մահը, որ կարելի է անուանել Կովկասահայ մանկավարժների նահապետը։ Սանասարեանի պաշտպանութեամբ Գերմանիաի մէջ յատկապէս ուսած լինելով մանկավարժութիւնը, երբ Կովկաս վերադարձաւ, թէ՛ մանկավարժական հրատարակութիւններով և թէ՛ ուսուցչական պաշտօն վարելով նշանակելի մասն մը տուած է մանկավարժական գաղափարների տարածման Կովկասահայերին մէջ։ Իր թաղման հանդէսը չքեղ կերպով կատարուած է Թիֆլիսի մէջ դեկտ. 3/16ին։ Մեռած է Նոյ. 29ին, 72 տարեկան հասակին մէջ։

ՌՈՒՍ ԶՕՐԱԲԱՆԱԿԸ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Պետրոգրադ, 12 յունվար

Ծովամերձ երկրամասին մէջ, Թուրքերը յունվար 9ի գիշերը Արխավ գետի աջ ափին վրայ անցնելու համար նոր փորձ մը ըրին որ մեր հրաձգութեամբը յետ մղուեցաւ։

Յունվար 10ի արշալոյսին, մերինները մտան Տէվ գիւղին մէջ, որ կը գտնուի Թորթումի լճի հիւսիսակողմը, և գրաւեցին անոր հիւսիսարևելեան սահմանը։

Թորթումի լճի դէպի հարաւ-արևելքը, մեր խումբերու զինուորներ, Սոքոլովի և Մէլիք Յուսէփովի հրամանատարութեան տակ, յունվար 9ի գիշերը յարձակեցան Արտոսդ գիւղի երկրամասին մէջ գտնուող Թուրք տարրերին վրայ, ռըմբակոծեցին զանոնք ձեռքի գնդացիրներով և յետոյ անոնց վրայ յարձակեցան սուիններով։ Թշնամին որ անյաջողութեամբ փորձեց մեր խումբերուն ճանապարհը կտրել, ցիրուցան եղաւ ծանր կորուստներ կրելով։ Մեր խումբերը որոնք գերիներ բռնած էին, վերադարձան առանց կորուստ ունենալու։

Սեվրիչայի և Օլթիչայի ձորերին կռիւ մը սկսած է։

ՏԵՂԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴ

Հոգաբարձութիւն
Հայոց Մատրան
Մարսիլիոյ

—

Ephorie de la Chapelle
Arménienne
Marseille

Մարսէյլ, 14 յնվր. 1916

Հոգաբարձութիւնս պատիւ ունի ծանուցանելու Հայ գաղթականութեան Մարսէյլի, թէ Սբ. Ծննդեան տօնին առթիւ, համաձայնած ըլլալով Փարիզի Հայ Եկեղեցւոյ պատ. Հոգաբարձութեան հետ, տեղւոյն հովիւ Արժանապատիւ Տէր Վռամշապուհ Աւագ քահանայն հրաւիրած է գալ և պատարագ մատուցանել, առաջիկայ 23 յունվարի կիւրակէ առտուն ժամը 10ին, տեղւոյս Սբ. Մատրան մէջ։

Այս տօնին առթիւ Հայորդութիւն առնելու փափագողները կրնան ներկայ ամսի 22ի չաբաթ օրը առաւօտուն ժամը 10էն ց12 և կէսօրէն վերջ ժամը 2էն ց6 ներկայանալ Մատուռը և խոստովանիլ։

Ի դիմաց Հոգաբարձութեան
Ատենապետ
Յովհ. ՍԱՀԱԹՃԵԱՆ

* * *

Թէև բազմաթիւ հարիւրաւոր Հայ կամաւորներ կան որոնք Օտարականների Լէգէոնին (Légion étrangère) մէջ մտած կը կռուին Ֆրանսայի համար, որով իրաւունքի և ազատութեան դատին անձնուիրաբար ծառայած կը լինին համակրութիւն և պատիւ բերելով Հայ անունին, միևնոյն ժամանակ Ֆրանսայի Հայ երիտասարդներ ալ կան որոնք բուն ֆրանսական զօրաբանակին մէջ կը գտնուին այժմ և իրենք ալ այդ կերպով միութեան պատուաւոր գիծ մը կը հանդիսանան Ֆրանսայի և Հայ անուններին միջև։ Միայն Մարսէյլի Ֆրանսահայ չատ փոքրաթիւ գաղութէն 13 երիտասարդներ կը գտնուին այժմ Ֆրանսական զօրաբանակին մէջ. և ասոնք մեր գիտցածներն են միայն. հաւանօրէն ուրիչներ ալ կը գտնուին որ մենք չենք գիտեր և անոնց ալ անուններն պարծանքով կը հրատարակենք եթէ մեզ հաղորդուին։

Ահա մեր գիտցած 13 զինուորների անունները.

Արչակունի Ալեքսանեան, Արչակունի-Իւթիւճեան Լևոն, Գասպարեան Գասպար, Թէքքեան Տիրան, Միրզայեանց Արամ և Վահան, Նեսիկեան, Սահաթճեան Վահէ, Կ. Սրապեան Էդուար և Բիեր, Փորթուգալեան Վահան և Լևոն և Քէրվանպաչեան,

— Մարսէյլի հայ գաղութի Ընդհանուր ժողովը գումարուեցաւ անցած հինգչաբթի օր։ Թէև այս անգամ ալ չատեր չէին եկած (14 անդամներէն 7ը միայն ներկայ էին), բայց 4 անդամներ քուէարկութեան համար իրենց փոխանորդներ նչանակած էին և 1ն ալ ուղղակի ղրկած էր իր քուէն փակ նամակով։ Արդէն կանոնագրին համեմատ ժողովին որոշումները վաւերական կը համարուէին այս անգամ քանի հոգի ալ ներկայ գտնուէր։

Հոգաբարձութիւնը կարդաց իր տարեկան համարատուութիւնը որ Ընդհանուր ժողովէն ընդունելով վաւերացուեցաւ։ Թէև Ընդհ. Ժողովը թախանձեց Հոգաբարձութեան յետ առնել իր հրաժարականը, բայց երբ նա պնդեց իր հրաժարականի վրայ, նոր ընտրութեան համար քուէարկութիւն կատարուելով, հետեւեալ 3 անձերէն կազմուեցաւ նոր Հոգաբարձութիւնը.

Տիարներ՝ Թիւրապեան Արման,
Կիւմիւշեան Սարգիս,
Սէլեան Յակոբ,

Ցեղիս հովուութեան թեկնածու քահանաների նամակները կարդալու ժամանակ չմնաց և այդ խնդիրն ուսումնասիրելով յետոյ ընդհ. ժողովին ներկայացնելու հոգածութիւնը թողուեցաւ Նորընտիր Հոգաբարձութեան։ Արդէն նախորդ նստի ատենագրութեան ընթերցումը և այդ առթով նոյն իսկ Դիւանի անդամներին ինչպէս և ժողովականներին մէջև ծագած վիճաբանութիւնները չափազանց ժամանակ գրաւած էին։ Դիւանի անդամներին մէջև անհամաձայնութեան դրդութիւնը արդէն այն՝ աստիճանի հասած էր որ Տիար Ատենապետը նստին վերջերը իր սովորական պաղարիւնութեանը հակառակ կերպով դիտողութիւն ըրաւ Տիար Ատենադպրին և իր հրաժարական տուաւ։ Բայց ընդհ. ժողովը չընդունեց այդ հրաժարականը, որ նոյն իսկ կանոնի հակառակ կը լինէր ընդունիլը քանի որ օրակարգին մէջ չկար այդպիսի հրաժարականի խնդիր մը (Ներքին կանոնագիր, յօդ. 8)։

Թէև ուրիշ տեղեր ալ ընդհանուր ժողովների մէջ անպակաս կը լինին երբեմն բուռն կերպարանք առացող վէճեր, բայց շատ տխրալիթ է մեզի պէս փոքրաթիւ Հայ գաղութի մը մէջ առանց պատահիլը, մանաւանդ այս միջոցին որ աւելի քան երբէք պէտք կայ համերաշխութեան։ Փափաքելի էր որ դէթ այնպիսի եկեղեցական մը գտնուէր տեղիս հովուութեան համար որ իր պաշտօնի բերումով կարենար սիրոյ և համերաշխութեան ոգին մտցունել գոնէ տեղիս մատրան պահպանութեան վերաբերեալ ոչ-քաղաքական խնդրին մէջ...։

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՄԱՔՈՒՐ ՀԱԳՈՒԻԼ ՈՒԶՈՂՆԵՐՈՒՆ

Ամերիկեան եւ ֆրանսական ճաշակով հագուիլ ուզողներուն կը ծանուցուի դիմել հետեւեալ հասցէին.

Ա. ԹՈՐՈՍԵԱՆ
Րիւ տը լ'Արք, Թիւ 7, Ա. յարկ
A. Torossian
Rue de l'Arc, N. 7
MARSEILLE

Չափաւոր գին եւ խնամուած աշխատանք։ Դիմեցէ՛ք եւ գոհ պիտի մնաք։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Հաւաստի աղբիւրներէ առնուած և իրար հաստատող լուրերէ կիմացուի որ ուտեստական վիճակը շատ գէշ է մանաւանդ Կ.պոլսի մէջ։ Ուտելիքները հետզհետէ աւելի կը թանկանան յուսահատեցուցիչ ընթացքով մը։ Սովորական գործածութեան ապրանքները առասպելական գիներով կը ծախուին։ Սուրճին օխան (1.280 կրամ) 10 ֆրանգի կը ծախուի, շաքարը 6 ֆր., քարիւղը 30 ֆր. մէկ ամանը (bidon), կանոնաւոր ժամանակ, քարիւղի 2 ամանը պարունակող 1 սնտուկը կը ծախուէր 30 ղրուշի։ Իսկ հացին օրական վաճառումը խիստ կերպով սահմանափակուած է. մարդ գլուխ օրական քառորդ քիլօէն աւելի չըտրուիր։

Պէրլին-Կ.պոլիս ուղեգծին բացուիլը յայտնապէս դժգոհութիւն պատճառած է Կ.պոլսի ժողովրդին մէջ որովհետև Գերմանացիները որոնց պաշարները կը պակսէին, օսմանեան մայրաքաղաքի ուտելիքի պահեստները ամբողջովին պարպեցին։ Մեծ մասամբ ատոր կը վերագրուի անհրաժեշտ ապրանքների սաստիկ թանկանալուն պատճառը։

ՎԻԼՀԷԼՄ Բ.Ի ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Գերմանիաի վիլհէլմ կայսրի հիւանդութեան մասին հակասական լուրեր կուգան։ Ոմանք կիմացնեն թէ հիւանդութիւնը ծանրացած է և չագաւոտիր. մինչև իսկ մեռած լինելու զրոյց կար. իսկ Պէրլինէն եկած լուրերն ալ կըսեն թէ վիճակը բարեփոխուած է և մինչև անգամ ընդունելութիւններ ընել սկսած է։

Արդեօ՞ք այս ալ նախորդ սուլդան Համիտի վիճակին մէջ կը գտնուի, որի մեռնելուն հեռագիրը կուգար յաճախ Եւրոպա բայց չէր հաստատուէր յետոյ, մինչև որ գահընկեց եղաւ և այդպէս վերջացաւ իր առողջական հանելուկը։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Թիւրք կառավարութիւնը հանդէսներով և լուսավառութիւններով տօներ և յայտարարեր է ժողովրդին թէ մեծ յաղթութիւն մը տարած են Կալիպոլիի մէջ, յարդուփշուր ընելով անգլիական և ֆրանսական զօրքերը որոնք մեծ կորուստներ ունեցեր և հազիւ իրենց մէկ մասը մարտանաւերը մտնելով յաջողեր են փախչիլ։ Մինչդեռ ինչպէս յայտնի է, իրողութիւնը հակառակն է. դաշնակիցները նոր ռազմավայրերի պահանջներին համեմատ իրենց զօրքեր Սալոնիկ և այլուր տեղափոխել յարմար տեսնելով, Կալիպոլիէն իրենց բոլոր զօրքերը թնդանօթներով, ռազմամթերքներով և ամէն նիւթերով մէկտեղ յաջողած են առանց ոեւէ կորուստի տեղափոխել. Թիւրք զօրքերը մինչև որ իրար անցեր են յարձակելու համար դաշնակիցների զօրքերին վրայ, անոնք արդէն հեռացած էին, որով Թիւրքերը գրեթէ առանց պատերազմի վերագրաւած են պարապ թողուած տեղերը։

Թիւրքերի այս յաղթական տօնախմբութիւնը մասամբ կը նմանի Անդրիանուպոլսի վերագրաւման առթիւ իրենց կատարած տօնախմբութեան որով Թիւրք կառավարութիւնն ու թերթերը մեծաղմուկ պոռոտաբանութիւններով յայտարարեցին թէ ռազմագէտ Էնվէր փաշան օսմանեան առիւծանման զօրքերով քաջաբար մտաւ Անդրիանուպոլիս մինչդեռ Պուլկարները այդ միջոցին արդէն Անդրիանուպոլիսը պարապ թողած և հեռացած էին, յունասերպական և ռումանական դաշնակցութեան դէմ իրենց ունեցած պատերազմին հետևանքով։

— Դաշնակից զօրքերը գրաւեցին Յունաստանի Գօրֆու կղզին ուր կը փոխադրեն սերպ զօրաբանակի մէկ մասը, այդ դիւցազն զօրքերը անօթութենէ և մահէ ազատելու և պատսպարելու համար։ Գորֆուն որ ալպանական ծովեզրին դրացի է, շատ յարմարութիւն ունի այդ բանի։ Դաշնակից տէրութիւնները ծանուցագրով մը յոյն կառավարութեան իմացուցին իրենց այդ կարգադրութիւնը, յայտարարելով միանգամայն որ Յունաստանի դաշնակից Սերպերին խնամելու համար եղած այդ գրաւումը ժամանակաւոր է և թէ թշնամութիւններին դադարումէն յետոյ Յունաստանի պիտի վերադարձուին ինչպէս միւս առժամապէս գրաւուած կղզիները նոյնպէս և Գորֆուն։

* * *

Աւստրիացիները որ 200.000 զօրքով և խոշոր թնդանօթներով յարձակած էին դիւցազն բայց ուժասպառ դարձած փոքրիկ Մոնդէնէկրօին (Գարատաղ) վրայ, որի թիկունքն եղող Սերպերն ալ անկարող վիճակի մը մատնուած են առ այժմ, յաջողեցան գրաւել Լովչէն լեռը որմէ կրնան դիւրաւ յառաջանալ Մոնդէնէկրօի մայրաքաղաքը Ցէթինէ։ Վիէննայէն եկած լուրերին նայելով, Աւստրիացիները գրաւած են այժմ Ցէթինէն ալ, ուրկէ հեռացած կը լինին արդէն Նիկիդա թագաւորը և իր զօրաբանակը։

Բայց այս փոքրիկ տէրութիւնների, Մոնդէնէկրօի, Սերպիաի և Պելժիքի հետզհետէ յաղթուիլը՝ թէև ոչ աննշան, երկրորդական բան մ'է, որ վճռական նշանակութիւն մը չունի բուն պատերազմի յաջողութեան վրայ։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Հոլանտական Հնդկաստան. ՈՄՆ. — Ձեր ղրկած 4 անգլ. ոսկիի չէքը որ Լոնտոնի վրայ էր, գանձելով, իր արժէքը 109 ֆրանգ յանձնեցինք Մարսէյլի Հայ Երիտասարդաց Միութեան, իր միջոցով Թիֆլիս Ազգային Բիւրոյին ղրկուելու համար։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒՏ ՄԸ

Spécifique Essemp կը բուժէ արմատապէս ամէն տեսակ մորթային հիւանդութիւններ, նոյն իսկ այն մորթային հիւանդութիւնները որ համբաւաւոր մասնագէտներ չեն կարող բուժել։ Spécifique Essemին գինն է 10 ֆրանք. բայց այն ամէն հայրենակիցներ որոնք հայերէն լեզուով ուղղակի հետեւեալ հասցէին դիմեն, հարիւրին 50 զեղչ մը պիտի ստանան։

Pharmacie Lange
20, rue d'Avron PARIS (XXème)

Ամենամնտիր զօրացուցիչ դեղն է Cachets Essemp։ Գինն է 4 ֆրանք տուփը։ Միեւնոյն հասցէին։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Ար.Աճ.ի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին, ի միջի այլոց, և հետևեալ գիրքերը, որոնց արժէքները նշանակուած են իրենց առջև։

Մարսէյլէն դուրս ղրկելու ճանապարհածախքը գնողին վրայ է. ուստի հաշուի դիւրութեան համար կը նշանակենք թէ Մարսէյլի մէջ ծախուելու գիները և թէ փոստով ուրիշ քաղաք ղրկուելու գիները։ (Այս վերջինները փակագծի մէջ գրուածներն են։) Արժէքը կանխիկ չստացուած գիրք չըրկուիր։ Արձանագրուած (recommandé-registered) ծրարով ստանալ ուզողները պէտք է 25 սանդիմ աւելի ղրկեն իւրաքանչիւր ծրարի համար որ 2 քիլօէն աւելի պէտք չէ կշռէ։

—

Հ. Գ. Զարբհանէլեան Պատմութիւն հայկական տպագրութեան. սկզբնաւորութենէն մինչ առ մեզ։ 1,30 (1,50)։

Հ. Ա. Գոնտաքճեան. — ԳՐՊԱՆԻ-ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅ-ԳԱՂՂ.։ 1914։
(Մանր տառերով ու մաքուր տպագրութեամբ 360 երեսներէ բաղկացած բառգրքոյկ մ'է որ 5.000ի չափ բառ կը պարունակէ և վերջն ալ ընտանեկան կարգ մը խօսակցութիւններ գրուած են, ֆրանսական բացատրութեան ոճերին ծանօթացունելու համար) 1 ֆր. 05 (1,10)։

Հ. Ա. Գոնտաքճեան. — ԲԱՌԳԻՐՔ ԳԱՂՂ.-ՀԱՅ.։ Վենետիկ Ս. Ղազար. 914։ Գին 1 ֆր. 10 (1,20)։
(Գրպանի փոքրադիր բառարան մ'է 710 երեսներէ բաղկացած, աժանագին, և ֆրանսերէն գրեթէ բոլոր գործածական բառերը պարունակող. վերջը գրուած է նաև անկանոն բայերի խոնարհումը։)

Եզովբոս (Յոյն երևելի առակախօսին կենսագրութիւնը և իր 300է աւելի իմաստալի, զբօսցունող և կրթող առակները կը պարունակէ։ Ամէն մէկ առակի վրայ անոր բարոյական իմաստը գրուած է թէ՛ գրաբար և թէ՛ աշխարհաբար երկու տող ոտանաւորով. առակին տակն ալ աշխարհաբար գրուած խրատական բացատրութիւն մը և գրաբար 8 տող ոտանաւոր։ Առակները բացատրող բազմաթիւ պատկերներով զարդարուած է։ Կը բաղկանայ 540 երեսներէ, բաց ի պատկերներին յատկացուած երեսներէն։ Գ տպգր. 2 ֆր. և 30 սնդմ. (2,60)։

Հ. Ս. Երեմեան. (Ազգային դէմքեր. գրագէտ Հայեր. Տպագր 1913. Ա շարք. Գ. Աղայեան, Մ. Մամուրեան, Հ. Արսէն Բագրատունի, Վարեգին եպ. Սրուանձտեանց, Խրիմեան Հայրիկ, Խ. Միսաքեան, Ռ. Պէրպէրեան, Գեր. Եղ. Հիւրմիւզեան, Սեդրակ Տէր Սարգսենց. 2 ֆ. և 40 սնդմ. (ճ. 2. 80)։

Նոյն Բ շարք Մեսրոպ-Մաշտոց, Հայ աշուղներ, միջնադարեան գրականութիւն, Ց. Ճանիկեան, հոգեշունչ գրողներ, Նարպէյ, Ա. Հայկունի, Տիկին Մ. Սվաճեան, Տերոյենց, Ց. Պարոնեան). 2 ֆր. 40 (ճ. 2,80։)

Նոյն Գ. շարք (Տ. Գաբրիէլ Պատկանեան, Հ. Ղ. Ալիշան, Խաչատուր Աբովեան, Թովմաս Թէրզեան։ 2,40 ճ. 2,80։

Նոյն Դ շարք (Եղիա Տէմիրճիպաշեան. — Արփիար Արփիարեան. — Նահապետ Ռուսինեան. — Պետրոս Դուրեան). 2 ֆր. 40 (ճ 2,80)

Նոյն Ե շարք (Գրիգոր Օտեան. — Մկրտիչ Պէշիկթաշլեան. — Ծերենց Յովսէփ Շիշմանեան. — Սրապիոն Հէքիմեան։ 2,40 (2,80)։

Նոյն Զ. շարք (Րաֆֆի. — Պերճ Պռօշեանց. — Սմբատ Շահազիզ. — Դողոխեանց): 2,40 (2,80):

Նոյն Է շարք (Գամառ-Քաթիպա. — Ալվազեան Աբրահամ. — Մանուէլեան Տիգրան. — Աճէմեան Մկրտիչ. — Խաչիկեան Ա. — Ազատուր Վիգտորիա. — Զարդարեան Ռուբէն. — Զեյթուն Մինաս. — Լեօ. — Բաշալեան Լ. — Պարթևեան Սուրէն. — Զօհրապ Գրիգոր. — Տիւսաբ Սրբուհի. — Ց. Ափիար. — Ոսկեան Կարապետ. — Շիրվանզադէ. — Սեթեան Յովհաննէս)։ 2,40 (2,80)։

ՏՆՕՐԷՆ — ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՕՐ ԹՈՒՐԳԱԼՆԵԱՆ
ՄԱՐՍԷՅԼ

Հայերէն Տպարան Մ. Փիրպուդեանի
Le Gérant : François CARRIERE.
Marseille. — Imprimerie du Midi